ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՓԱՌՔԸ

Գրեց՝ ՊՐՈՖ. Ն. ԱԴՈՆՑ

VIII

ՏԱՐԵԳՐԻՔԻ ասելով, Ատրներսեհ կոյրի մի եղբօրորդին՝ Ատրներսեհ դալիս է Արշիլի մօտ, իսկ միւս երեք եղբօրորդիք, որոնք յանցաւոր էին իրենց հօրեղբօր հանդէպ, Տարօնից գնում են Շակիխ եւ այնտեղ բնակւում նոյն Արշիլի հաւանութեամբ:

Այստեղ արդէն չփոթութիւն կայ: Աշոտ կոյրի օրով Տարօնը տակաւին Մամիկոնեանների ձեռքին էր եւ ուրեմն այնտեղից հեռացող իշխանները չէին կարող Ատրներսեհի ազգական լինել: Տարեգրքի հայ թարգմանութեան կամ Զուանշէրի պատմութեան մէջ չի ասուած, թէ Տարօնից չուող եղբայրները Ատրներսեհի եղբօրորդիներն էին: Եթէ Շակիխով հասկանալու է Շաքէ, ապա խօսքը վերաբերում է Սահլ կամ Սահակ Սմբատեանին, որ Բագրատունի էր ծագումով եւ յիրաւի տէր էր Շաքէի Բուղայի ժամանակ: Հաւանօրէն այս նուաճման յիշողութիւնն է, որ Տարեգիրքը կապել է Ատրներսեհի եղբօրորդիների հետ եւ անհիմն:

Ինչպէս եւ բացատրելու լինենք Տարեգրքի պատմուածքի մանրամասնութիւնները, անտարակոյս է մի բան ,որ Ատրներսեհ կոյրը ինքն Աշոտ պատրիկն էր, որ կուրացաւ 749 թուին: Բացայայտ է նաեւ, որ Ատրներսեհ կոյրի եղբօրորդի՝ Ատրներսեհը, որ Հայաստանից գալիս է Արշիլի մօտ, Աշոտ կոյրի որդի Վասակն է, կամ սրա որդի Ատրներսեհը, եթէ չենք ուզում նոյնացնել Վասակն ու Ատրներսեհը: Վասակի եղբայր՝ Սմբատ սպարապետը եղաւ նախահայր Բագրատունիների նոր շրջանի Հայաստանում, իսկ ինքը Վասակը հիմ դրեց Բագրատունիների հարստութեան Վրաստանում:

Սմբատը եւ Վասակը մասնակից էին 772 թուի ապստամբական շարժումին: Սմբատն ընկաւ Բագրեւանդի կռուում, իսկ Վասակ թռուում է թէ հեռացաւ Տայք, խուսափելով արաբների վրէժխնդրութիւնից: Նրա կալուածը Հայաստանում Դարիւնքն էր եւ ոչ Տարօնը, ինչպէս կարծում է Մարկուարտ:

Ղեւոնդ ասում է, որ «Վասակ որդի Աշոտոյ եւ որք ի տոհմէն Ամատունեաց եւ Տրունեաց մնացին արդէն ոմանք յամուրն բերդի ի Դարիւնս գեօղ եւ ի ծագն Մակուայ» (էջ 176):

Բագրատունեաց ընիկ ոստանը ժառանգել էր, ուրեմն, Վասակը: Նրա եղբօրորդին Աշոտ Մսակերը, տեսանք որ, հաստատուեց Արշարունիքում:

Վարդանը, քաղելով Շապուհ Բագրատունուց, թւում է մեզ Վասակի սերունդը. «Վասակ սկիզբն թագաւորացն վրաց, որոյ որդին Ատրներսեհ, սորա՝ Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայրն Գորամ, հետ սմա՝ Դաւիթ որդի Բագարատայ՝ որ սպանաւ ի Գորամայ հօրեղբօրմէ իւրմէ, որոյ որդին Ատրներսեհ, սորա որդին Դաւիթ, սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ իւր կին զդուստրն Սենեքերիմայ թագաւորին Վասպուրականի». (Վարդան, էջ 82):

Վրաց Տարեգիրքը համամիտ է այս ճիւղագրութեան: Աշոտ կոյրի եւ Վասակի փոխարէն ունի Ատրներսեհ կոյր եւ նրա եղբօրորդի Ատրներսեհ եւ այնուհետեւ կրկնւում է նոյնութեամբ՝ Աշոտ Կիւրապաղատ (+826 թ.). սորա որդի Բագարատ (+876 թ.), սորա՝ Դաւիթ (+881), սորա՝ Ատրներսեհ (+923), թագաւոր 899-ին, սորա՝ Դաւիթ (+937):

Ոչ հայ եւ ոչ վրացի յիշատակարանները ոչինչ չգիտեն Ատրներսեհի մասին, միայն անունն են յիշում, հաւանօրէն վրացի անունն է Վասակի: Պատմութիւնը սկսւում է Աշոտից, ինչպէս որ հայ Բագրատունիները՝ Աշոտ Մսակերից: Երկու ժամանակակից, արտաքոյ կարգի կարեւոր, դէմք:

«Եւ տայր իշխանն Իսմայէլի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի, զերկիրն վրաց, որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան եւ կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան»;